Հայաստանը եւ Ադրբեջանը ոչնչով Ֆրանսիա եւ Գերմանիա չեն: Հայաստանի որեւէ կախումն Ադրբեջանից անընդունելի է, ցորենի նման ռազմավարական նշանակության սննդամթերքի դեպքում՝ հատկապես: Բաքվի պահեստարաններից Հայաստանին ցորեն մատակարարելը պետք է արգելվի՝ հիմա եւ ամբողջ ժողովրդի կողմից, հանրագրի ճանապարհով:

Կարդացեք՝ էջ 6

200-ից ավելի դպրոց է փակվելու, եւ սա օպտիմալացման անվան տակ քողարկված կրճատում է, որը հարվածի տակ է դնելու հեռավոր համայնքների կենսունակությունը: Վաղատուրի բնակիչները մեզ հետ զրույցում ասացին, որ իրենց դպրոցի շենքային պայմանները լավ են, եթե դպրոցը փակվի, գյուղը կդատարկվի, գյուղ պահողը դպրոցն է:

Կարդացեք՝ էջ 7

Հենց իրենք 2018 թվականից հետո կերտեցին պատերազմ, իրենք պատերազմի ճարտարապետներ են: Ուստի, թե՛ պատերազմում, թե՛ արտաքին դիվանագիտության մեջ պարտված իշխանությունները երբեւէ չեն կարող բերել խաղաղություն: Այն, ինչ ասում են սրանք, կեղծ է, սա խաղաղություն չէ, սա սուվերեն տարածքների հանձնման նախապայման է:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 48 (4183), 27 մարտ, ուրբաթ, 2026

www.hraparak.am

Չնայած ՔՊ-ականները վերջին օրերին դիվոտած արձագանքում են ընդդիմության քննադատություններին, եւ երեկ էլ Արարատ Միրզոյանը հարցուպատասխանի ժամանակ հայտարարեց, որ ընդդիմությունը խաղաղության պայմանագրի մասով «երաշխավորացավ է կպել», սակայն ընդամենը 3 տարի առաջ, դեռեւս մորուքով Փաշինյանը Հ1-ում բառացի ասել էր. «Եթե երաշխավոր չլինի, խաղաղության պայմանագիր կնքելուց 12 ժամ անց կարող է պատերազմ սկսվել»: Միրզոյանը նախօրեին մուննաթ էր գալիս. «Հիմա էլ ընդդիմադիրներն ունեն նարատիվներ, այդ թվում՝ Ղարաբաղ հետ բերելու... որոնք ուղղակի հակասում են խաղաղությանը: Նոր նրբերանգ է մտել վերջին օրերին՝ խաղաղություն, բայց երաշխավորով, երաշխավորված: Երաշխավորներն առհասարակ հետապնդում են իրենց շահը: Սառը հաշվարկների աշխարհում, միջազգային հարաբերություններում ոչ մեկը ոչ մեկի սիրուն աչքերի համար չի գնում, երաշխավորություն չի անում, նաեւ իր զինվորների արյունը չի թափում եւ այլն: 2-րդը. մենք գիտենք տասնյակներով երաշխավորված, ստորագրված, երաշխավորների խմբի կողմից երաշխավորված եւ կնքված խաղաղություններ, որոնք հետո խախտվել են շատ հեշտությամբ, ընդ որում, հետաքրքրաբար, խախտվել են երաշխավորների կողմից»: Սլաքներն ուղղում էին ՌԴ-ի կողմը, թեեւ անունը չեն տալիս: Մեր տեղեկություններով, խաղաղության պայմանագրի նախնական փաստաթղթում եղել է երաշխավորի մասին կետ, սակայն հանվել է Ալիեւի պահանջով, ինչից հետո ՔՊ-ականները հերթական «նշաձողն» են իջեցրել:

Երեկ հայտնել էինք, որ Երեւանի տարբեր հասցեներում իրավապահները խուզարկություններ են իրականացնում: Թիրախում թաղային հեղինակություններն են, որոնք ծանրակշիռ դերակատարում ունեն իրենց թաղերում, հարց լուծողներ են, այսպես կոչված՝ տասով2չիկներ: Չնայած խուզարկություններն իրականացրել են զենք-զինամթերք փնտրելու քրեական վարույթի շրջանակներում, սակայն մեր աղբյուրները հայտնում են, որ իրական նպատակը «խառոշիների» աչքն ընտրություններից առաջ վախեցնելն է: Մեզ ասացին, որ նման խուզարկություններ սկսել են արդեն մեկ շաբաթ առաջ. իրավապահները գնում են հեղինակությունների հետեւից եւ բացատրական աշխատանք տանում, որ եթե ընտրություններին ընդառաջ հանկարծ իրենց դեմ աշխատեն, ապա քրեական ենթամշակույթի դեմ պայքարի հոդվածով կկալանավորվեն: Ոմանց էլ բարեկամաբար խորհուրդ են տվել, որ եթե մեզ հետ չեք, լավ կլինի՝ նախընտրական եւ բուն ընտրական փուլում գնաք արտերկիր՝ «հանգստանալու»:

Քողն ընկնում է

Հավանաբար, նախընտրական փուլը ոչ միայն նյարդայնացնում ու ջղաձգում է առաջացնում, այլեւ յուրօրինակ անկեղծության պահ է, եւ դա է պատճառը, որ Նիկոլ Փաշինյանը մեկը մյուսի ետեւից խոստովանություններ է անում, փակագծեր բացում՝ սարսափի նոր պահեր ներկայացնելով իր ունկնդիրներին: Նա մեկ հայտարարում է, թե 20 թվի ողբերգությունը գիտակցված պատերազմ է եղել՝ իր պատկերացրած «անկախությունն ու պետությունը» ձեռք բերելու համար: Մեկ հայտարարում է, որ Արցախի ժողովուրդը փախել է՝ «ճողոպրել» է 2023 թվին, եւ կռվելու մասին պնդումները, «մեղմ ասած, չեն համապատասխանում իրականությանը»: Հետո հայտարարում է, որ Ղարաբաղի ժողովրդին պահել են պատանդի կարգավիճակում, եւ նրանք հիմա վերջապես հայրենիքում հանգրվան են գտել ու պետք է խաղաղվեն, տնավորվեն, հրաժարվեն «պանդուխտի»՝ Արցախ վերադառնալու մտքից: Ապա ասում է, որ ինքը պաշտոնապես հրաժարվում է «պատմական արդարության վերականգնման» ճանապարհից, որովհետեւ եթե մենք հիմա ասենք՝ Արցախում էթնիկ զտում է եղել, ադրբեջանցիներն էլ են նույն խոսույթը կիրառելու (թե ում են հայերն էթնիկ զտման ենթարկել՝ պարզ չէ): Եթե ասենք՝ ցեղասպանություն է եղել, հայելային սկզբունքով նրանք էլ են խոսելու իրենց ցեղասպանված լինելու մասին, եթե ասենք՝ վերադարձ, իրենք էլ են ասելու՝ վերադարձ: Եվ այս մտածողությամբ մարդը ՀՀ վարչապետն է ու հավակնում է շարունակել աշխատել: Մի պահ պատկերացրեք, որ հրեաները հրաժարվեին Հոլոքոստի հիշատակից՝ վախենալով, որ գերմանացիներն իրենց կասեն՝ դուք էլ եք մեր նկատմամբ ցեղասպանություն իրականացրել: Այս մարդն անգամ չի տարբերում Արեւմտյան Հայաստանի խնդիրն Արցախի խնդրից: Վերջապես՝ պատմական արդարություն վերականգնելու խնդիր հայ ազգը չունի, ընդամենը իր պատմությունից չի ուզում հրաժարվել:

Մի քանի օրից ՔՊ-ում ներկուսակցական ընտրությունների երկրորդ փուլն է, ՔՊ-ական պատվիրակները կորոշեն ՔՊ ընտրացուցակի առաջին 50-ի դասավորությունը եւ վարչապետի թեկնածուին: Սակայն պարզվում է՝ ծածուկ, անաղմուկ շարունակում են նաեւ առաջին փուլի «ընտրակեղծարարներին» պատժելու գործընթացը: Անաղմուկ, քանի որ հանրության մոտ կասկածներ են առաջանում, որ իշխանությունը, որը չի կարողանում իր ներսում արդար, թափանցիկ ընտրություններ կազմակերպել, որտեղ խախտումներ չլինեն, ինչպես է արդար համապետական ընտրություններ անցկացնելու: Մենք գրել էինք, որ 50-ի մեջ հայտնված 3 հոգու արդեն հեռացրել են թեկնածուների ցանկից, երեկ տեղեկացանք, որ չորրորդ ընտրակեղծարարն է հայտնաբերվել՝ Լոռվա մարզից մի շարքային կուսակցական, որը պատվիրակներին նամակներ է գրել ու խնդրել, որ իրեն ընտրեն, ինչը Փաշինյանն արգելել էր՝ առաջին փուլում որոշել էր, որ քարոզչություն չպետք է իրականացվի:

ՍԱՍՈՒՆԻ ՎԱԽՆ ԵՆ ԲՌՆՈՒՄ

Նախօրեին տեղեկություններ տարածվեցին ԵԿՄ նախագահ, ՔՊ անդամ Սասուն Միքայելյանին եւ ԵԿՄ-ին առնչվող մեղադրանքների մասին: Դեռ անցած տարեսկզբին մի քաղաքացի, որը ԵԿՄ-ի կազմում ծառայություն է իրականացրել սահմանին, իսկ այժմ «Վանաձոր» ՔԿՀ-ում կալանքի տակ է, հաղորդում է ներկայացրել, թե իբր Սասուն Միքայելյանի գիտությամբ՝ ԵԿՄ սահման պահողները զինվորի համար նախատեսված ուտելիքը, զենք-զինամթերքն իջեցրել են պոստերից եւ էժան գնով վաճառել: Բացի այդ, նույն ԵԿՄ-ականները նաեւ թմրանյութ են վաճառել: Իրավապահներն այդ հաղորդումից մոտ մեկ-մեկուկես տարի անց որոշել են կալանքի տակ գտնվող քաղաքացու եւ Միքայելյանի միջեւ առերեսում անել: ՔՊ մեր աղբյուրները վստահ են, որ անձամբ Փաշինյանի հրահանգով է Միքայելյանի դեմ գործը նոր ընթացք ստացել: Որոշել են Սասուն Միքայելյանին, որն «ուրախ ավտոբուսի» տխուր «պասաժիրներից» է եւ ներկուսակցական ընտրությունների արդյունքներով ընդգրկվել է 50-յակում, մի թեթեւ պատժել: Մարզային վոյաժների ժամանակ ուղիղ եթերներից պարզ է դառնում, որ նա ձեւական ներկայություն է ապահովում ավտոբուսում, մեկ անգամ էլ բացահայտ մերժեց Փաշինյանի՝ ձեռքով սրտիկ ցույց տալու առաջարկը: Ընտրություններից առաջ Փաշինյանը փորձում է բոլորին բռի մեջ հավաքել եւ հասկացնել, որ բոլորը պետք է անեն այն, ինչ ինքն է ուզում, եւ որեւէ մեկը չի կարող մազաչափ անգամ ինքնուրույնություն դրսեւորել:

ՆՐԱ ԲՈԼՈՐ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ՄՇԱՑԵԼ ՈՒ ԺԱՆԳՈՏՎԵԼ ԵՆ, ՄՆԱՑԵԼ Է ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ԳՈՐԾՈՆԸ

*«Հրապարակի» զրուցակիցը հոգեբան **Կարինե Նալչաջյանն** է:*

- Վերջին օրերին Նիկոլ Փաշինյանն աղմկահարույց հայտարարություններ է արել, օրինակ, որ եթե ընտրությունների արդյունքում ինքը բացարձակ մեծամասնություն չունենա, պատերազմ կլինի: Հոգեբանական տեսանկյունից ի՞նչ է անում վարչապետը, ո՞րն է սրա նպատակը:

- Վերջին շրջանում նրա այդ անդաստիարակ պահվածքը զուգակցվում է տեռորի մթնոլորտով: Տպավորությունն այնպիսին է, եւ կան այդպես մտածելու բոլոր հիմքերը, որ այդ մարդը ձեռքը գցում է փրփուրներին: Նրանց վիճակը շատ վատ է, եւ իրենք հասկանում են, որ այլեւս չունեն սոցիալական հենարան: Անգամ այն գյուղերի մարդիկ, ովքեր գրկախառնվում են իրեն, համբուրվում են հետը, գեղեցիկ խոսքեր են ասում եւ այլն, իրականում դա դեռ ոչ մի բան չի նշանակում: Տեսախցիկների առաջ, այն էլ, երբ դիմացինդ բարձրաստիճան պաշտոնյա է, մարդ, որն ունի որոշակի ստատուս, փորձում ես ընդունել ջերմ, սակայն իրականում չես կարող վստահաբար ասել, թե տվյալ մարդն ինչպես է մտածում եւ իր քվեն ում է տալու: Անգամ երբ ինչ-որ մարդիկ Փաշինյանին ու իր թիմակիցներին հրավիրում են իրենց տուն, հյուրասիրում են եւ այլն, չենք կարող ասել, որ դա ռեալ արդյունք է: Ես հակված եմ մտածելու, որ այն միակ զգացումը, որ ունի ժողովուրդը նրա հանդեպ, զզվանքի զգացումն է: Նա գիտակցում է այս ամենն իրականում ու հենց այդ պատճառով էլ վախը իր ձեռքին գործիք է դարձրել: Վախն իրականում շատ ուժեղ հույզ է, այն ամենահնամենի եւ արխայիկ հույզերից մեկն է համարվում, որովհետեւ ունի ինքնապաշտպանական նշանակություն: Այս մարդը տեսնում է, գիտակցում է, որ այլեւս մարդկանց վրա ազդելու ուրիշ ձեւ չունի, նա այլեւս չի կարող ասել՝ սիրում եմ ձեզ, խոնարհվում եմ ձեր առաջ, նա անգամ չի կարողանում խոստումներ տալ, որովհետեւ մարդիկ հիմար չեն եւ ամեն ինչ տեսնում են: Անգամ այլեւս նախկինների մասին շատ չի խոսում, որովհետեւ դա էլ չի աշխատում, հասարակությունն արթնացել է թմբիրից: Նրա բոլոր գործիքները փչացել ու ժանգոտվել են, մնացել է սպառնալիքի գործոնը: Հատկապես նախընտրական այս շրջանում շատ կարեւոր է, որ օպոզիցիոն ուժերը կարողանան գտնե այս փուլում ճիշտ հակաքարոզչություն տանել, պետք է նրանք կարողանան հասարակությանը բացատրել, որ պատերազմի սպառնալիքը հերթական սուտն է, որ չի լինելու ոչ մի պատերազմ: Ի վերջո, մենք պետք է մի բան հասկացած լինեինք դեռ վաղուց՝ այս մարդն ինչ ասում է, դրա հակառակը պետք է սպասել: Տարիների փորձը դա է ցույց տվել: Ասում էր՝ վենդետա չի լինելու, վենդետա եղավ, ասում էր՝ տնտեսությունը զարգացնելու կախարդական փայտիկ ունեմ, պարզվեց, ոչինչ էլ չի կարողանում անել, ասում էր՝ Արցախը Հայաստան է, ամիսներ անց հանձնեց թշնամուն: Նա ինչ տեսակի խոստում ասես, որ տվել է, բայց պետք է հասկանանք, թե որքանով են արժանահավատ հենց նրա անհանգստությունների ու վախերի հետ է կապված: Ուզում է մարդկանց ասել՝ ես էլ ձեզ նման հասարակ մարդ եմ, սակայն մեր ժողովուրդը մեծ կենցաղային կուլտուրա ունի, եւ հեչ էլ նման չէ այդ անտաշ պահվածքը մեր ժողովրդի պահվածքին: Ամեն դեպքում, նրա ոչ մի քայլ, գործողություն հասարակության լայն շերտերի վրա ազդեցություն չի թողնում, մարդիկ ամեն ինչ հասկանում են: Մի այլ վտանգավոր ծուղակ եմ ես տեսնում. Ինչ-որ շրջանակներ փորձում են մարդկանց նրա հայտարարությունները: Պատերազմի վտանգը չեզոքանալու է միայն մեկ դեպքում, երբ այս մարդը հեռանա իշխանությունից:

- Իսկ այն վեճերը, կոնֆլիկտները, որ ունենում է քաղաքացիների հետ, ինչի՞ նշան են՝ խուճապի՞:

- Այո, միանշանակ: Իր ներսում մեծ խուճապ է: Նա իր տեսակով եսակենտրոն մարդ է, իսկ եսակենտրոն մարդիկ իրենց կաշվից բացի ուրիշ որեւէ բանի մասին չեն անհանգստանում: Նա վստահ է, որ մեծ փորձություններ են սպասվում իրեն, իսկ աշխարհաքաղաքական վիճակն այնպիսին է, որ այլեւս չի կարողանում հույսը դնել ամերիկաների, եվրոպաների վրա: Նրա միակ հույսն այս շրջանում Թուրքիան է, որը շահագրգռված է, որ նա մնա իշխանության, սակայն անգամ թուրքի համար էլ ինքն արժեք չէ: Մի օր էլ Թուրքիան է իրեն շպրտելու, բայց թե որ փուլում, նա էլ չգիտի: Նրա այս անդաստիարակ պահվածքը մեջ վախ առաջացնել, ամեն ինչ անել, որպեսզի մարդիկ կորցնեն իրենց ինքնագնահատականը, իրենց զգան անպիտան, ոչ մի վճռորոշ դեր չխաղացող: Օրինակ ասում են՝ ինչ էլ լինի, մեկ է՝ Նիկոլն է անցնելու: Մարդիկ, լսելով այս հուսահատեցնող հայտարարությունը, սկսում են մտածել, որ դե, իրոք, ուրեմն Նիկոլն արդեն հաղթած է, ու պետք չէ պայքարել, անգամ չարժե գնալ ընտրության: Ասեմ, որ այդ ծուղակը շատ ավելի վտանգավոր է, քան Նիկոլի՝ պատերազմի սպառնալիքը: Ամեն բան արվում է, որպեսզի մեր ժողովուրդը զոհի կերպարից դուրս չգա: Մարդկանց ներշնչում են, որ դուք գործոն չեք, ոչինչ չեք կարող փոխել, եւ սա շատ վտանգավոր նախադեպ է: Պետք է պայքարել այս ամենի դեմ, պետք է տանել արդյունավետ հակաքարոզչություն: Յուրաքանչյուր քաղաքացու պետք է բացատրել, որ ինքն արժեք է, իր քվեն արժեք է: Ես կարծում եմ, որ այն քաղաքական

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԻՐԱՆՑԻՑ 2 ՏՂԱՄԱՐԴ ՀՈՂԵՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԴԱՐԴԻՑ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

Մարտի 26-ին, կառավարության նիստում առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, անդրադառնալով Կիրանցի հայտնի պատին, հայտարարեց. «Տավուշում պարիսպը գնացել, ճիշտ տեղում կանգնել է, մենք այդ պաշտպանական պարսպի տեղն այլեւս ճիշտ ունենք, ու մեր ներսի անվտանգային եւ իրար հետ հարաբերվելու ներքին փոքր պարիսպիկների կարիքը վերանում է»: Իրականում, այնտեղ ոչ թե պարիսպ է, այլ՝ պատ, եւ Նիկոլ Փաշինյանը հավելեց. «Բայց ինչ հետաքրքիր բառ ասեցիք, այսքան որ գնացել, եկել եմ, կարող է ես չեմ նկատել, որ Կիրանցի այդ նոր կառուցվող տների շուրջ ինչ-որ պարիսպ չեմ հիշում, առնվազն բարձր պարիսպ»: Երբ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն ասաց՝ փողը չի հերիքել, դա առաջացրեց Փաշինյանի անզուսպ ծիծաղը. «Պարոն Խաչատրյանն ասում է՝ փողը չի հերիքում պարսպի համար, բայց դա նորմալ է, ռացիոնալ է, համենայնդեպս, եթե առաջնահերթությունը պարիսպը լիներ, առաջինը պարիսպը կսարքեին: Իմաստ չունի այնտեղ պարիսպ սարքել, որովհետեւ ճիշտ ասաց տիկին Ավանեսյանը՝ պետությունը պարիսպ դրել է արդեն»:

Կիրանցում կառուցված՝ նորահայտ սահման հռչակված պատը եւ դրա շարունակություն հանդիսացող, շերտավարագույրի նմանվող թիթեղյա ցանկապատը պարիսպ անվանելը, մեղմ ասած, մեծ սխալմունք է: Այդ պատը ոչ միայն Կիրանցի բնակիչներին, այլեւ միջպետական ճանապարհի Կիրանց գյուղի հատվածով պատի կողքով երթեւեկողներին անվտանգության, պաշտպանվածության զգացողություն չի տալիս: Սահմանազատման անվան տակ Կիրանցի մոտ 15 հեկտար հողերը, միջպետական ավտոճանապարհի մի հատվածը, Կիրանցի կամուրջն ապօրինաբար՝ միակողմանի կերպով Ադրբեջանին հանձնելով, Կիրանց գյուղի «թեւերը խուզել են»: Այդ «սահմանազատումից» հետո Կիրանցի արտավայրերը նվազել են, ինչն էլ պատճառ դարձավ, որ Կիրանցի բնակիչները մոտ 40 տոկոսով կրճատեն իրենց խոշոր եղջերավոր անասունների քանակը: Բացի այդ՝ սահմանազատումն արվել է այնպես, որ Կիրանցից տասնյակ հեկտարներով հողեր հայտնվել են ադրբեջանական դիրքերի մոտ, դրանց արանքում, այդ պատճառով դժվարամատչելի են դարձել բնակիչների կողմից մշակվելու համար: Դա է պատճառը, որ նախկինում Կիրանցի բնակիչները 38 հեկտար աշնանացան էին անում, իսկ անցած աշնանը, երբ գործում էր աշնանացան ցորենի սուբսիդավորման պետական ծրագիրը, հազիվ 10 հեկտար աշնանացան է ցանվել: Հանձնված տների, հողերի, այլ գույքի՝ ընդհանուր քանակով 58 անշարժ գույքի դիմաց գույքատերերին պետական բյուջեից դրամական փոխհատուցում է կատարվել՝ կառավարության գաղտնի որոշմամբ: Հայտնի չէ, թե ինչ սկզբունքով են որոշվել սեփականության իրավունքով, կադաստրից տրված վկայականներով հողերի, գույքի համար փոխհատուցման գումարների չափերը:

Կիրանցի մի բնակիչ մեզ ասաց, որ իր հողատարածքի համար սկզբում մոտ 2 միլիոն դրամ են առաջարկել, ինքը հրաժարվել է: Հետո Տավուշի մարզպետ, Նիկոլ Փաշինյանի դասընկեր Հայկ Ղալումյանն իրեն Տավուշի մարզպետարան է կանչել: Վերջինս պատմեց. «Մարզպետը կանչել ա, գին ա հարցրել, ես ասել եմ, որ վաճառքի տնամերձ հողամաս չունեմ, իսկ եթե պարտադրված պետք է ծախեմ, ապա՝ 20 միլիոն դրամ: Մարզպետն ասել ա՝ 5 միլիոն, չեմ համաձայնել, ասել ա՝ 10, ես չեմ համաձայնել, ասել ա՝ 16, ասել եմ՝ չէ: Մի քանի օրից կանչել ա, ասել՝ ես կապ չունեմ, վարչապետը որոշել ա՝ 10, ես էլ չեմ վերցրել: Դիմել եմ վարչապետին, պատասխանել են, որ իրենք կապ չունեն՝ «ձեր մարզպետարանի իրավասության սահմաններում է տվյալ գործընթացը»»: Եվ բնակիչն այդպես էլ փոխհատուցում չի ստացել իր հողի համար: Սկզբունքորեն փոխհատուցում ստանալուց հրաժարվել է Կիրանցի 6 բնակիչ, որոնց հարազատները զոհվել են ազատամարտում, Կիրանցի պաշտպանության ժամանակ: Հողերի հանձնումը վատ է ազդել գյուղացիների առողջության, ինքնազգացողության վրա:

Կիրանցից 2 բնակիչ մահացել է հողերն Ադրբեջանին հանձնելու դարդից: Նրանցից մեկը տարիներ շարունակ Կիրանցի գյուղապետարանում հաշվապահ աշխատած, այլ աշխատանքներ կատարած Գարուշ Ղազարյանն էր, որն ուղղակի տառապում էր սահմանազատման անվան տակ հողերի հանձնումից: Նա թեեւ տարեց էր, սակայն անբուժելի հիվանդություն չուներ, հարազատների խոսքերով՝ նրա առողջությունը քայքայեց արյունով պաշտպանված հողերն Ադրբեջանին հանձնելը: Կիրանցի մեկ այլ բնակիչ, որը տարիքով մեծ չէր, Կիրանցի կամրջի մոտ պտղատու այգի էր հիմնել, որը սահմանազատումով հանձնվել է Ադրբեջանին, ինչն էլ համագյուղացիները հետագայում նրա մահվան պատճառն են համարում:

Կիրանցի հողերի հանձնումը պառակտել է մարդկանց, թշնամություն գցել գյուղի բնակիչների միջեւ: Կիրանցից մեզ պատմեցին, որ 2024-ին Կիրանցի հարեւան Աճարկուտ գյուղի «Սերգեւըլկուտ» տարածքում Կիրանցի բնակիչների մի քեֆի ժամանակ գյուղացիներից մեկը, որի եղբայրը զոհվել է 1990-ականներին, բաժակ բարձրացնելով՝ շատ թունդ հայհոյել է նրանց, ովքեր հերոսների արյունով հեղված Կիրանցի հողերն Ադրբեջանին հանձնելու ժամանակ գրավոր հրաժարվել են սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերից եւ դրա դիմաց դրամական փոխհատուցում ստացել: Քեֆի սեղանի շուրջ եղել են նաեւ փոխհատուցում ստացած Կիրանցի բնակիչներ, սակայն ոչ ոք չի հակադարձել կենաց ասողին: Բոլորը ներքուստ համաձայն են, որ անթույլատրելի բան է տեղի ունեցել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«ՍԵՎԱՆ» ԲԿ-Ն ԵՎ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»-Ն՝ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԹԻՐԱԽՈՒՄ

Տորանոր վարույթներ են հարուցում եւ ներկայացնում հակակոռուպցիոն դատարան: Օրերս երկու նման գործի մասին լսեցինք: Մեկը «Սեւան» բժշկական կենտրոնի տնօրեն Արամ Նիկողոսյանին է վերաբերում, մյուսը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Հովսեփյանին, որի լիազորությունները քրեական վարույթով կասեցված են:

«Սեւան» ԲԿ տնօրենին մեղսագրվում է 2022-2024 թվականներին վերաբերող «խոշոր չափերի գույքի հափշտակություն եւ խմբի կազմում փաստաթղթերի կեղծում»: Երբ կարդում ես մեղադրանքը, թվում է, թե ԲԿ-ում թալանչիների բանդա է գործել: Իրականում, խոսքը ծառայողական հանցանքի մասին է: Ըստ դատախազության, տնօրենը 2 տարի աշխատավարձ է տվել իր մտերիմ անձին, որը հաճախ բացակայել է աշխատանքից, չի գնացել աշխատանքի այնքան, որքան պետք է գնար: 2 տարում նա ստացել է մոտ 2,2 մլն դրամ, հենց այսքան էլ հաշվարկվել է պետությանը հասցված վնասը, որն ամբողջությամբ փոխհատուցվել է: Աշխատանքի չգնացած այդ մտերիմ անձը, մեր տեղեկություններով, հիվանդանոցի աշխատակից Արաբելլա Հովհաննիսյանն է:

Թե ինչպես հանկարծ «Սեւան» ԲԿ տնօրեն Արամ Նիկողոսյանն անցավ անցանկալիների շարքը, դժվար է ասել: Հիշեցնենք, որ Արամ Նիկողոսյանին 2021 թվականին այդ պաշտոնին էր նշանակել Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը: Այն ժամանակ մարզային ԶԼՄ-ներով նոր տնօրենի գովքն էին անում, նշում, թե նոր ղեկավարը նորարարական մոտեցումներով է առաջնորդվում, նվազեցրել է ԲԿ-ի պարտքերը, վերացրել է փաստաթղթերի կեղծման արատավոր ավանդույթը, բարձրացրել է բժշկական ծառայությունների որակը, կերպարանափոխել «պայթած» հիվանդանոցը, նոր բաժանմունքներ բացել: Արամ Նիկողոսյանին պարգեւատրում էին, շնորհակալագրեր տալիս, ենթակաները տարածում էին իրենց նոր տնօրենի լուսանկարները՝ շնորհակալագրերը ձեռքին: Ընդամենը 2,2 մլն դրամի վերականգնված վնասի համար, առանց դատ ու դատաստանի, բազմաթիվ պատվոգրեր ստացած Նիկողոսյանի համբավը հավասարեցրին զրոյի:

Հակակոռուպցիոնի մյուս թիրախը Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրեն Արգամ Հովսեփյանն է, որն այս հիմնարկի հնագույն աշխատակիցներից է: Ասում են՝ բյուրոյի դատաբժշկական փորձաքննությունների բաժնում աշխատել է հիմնարկի ստեղծման օրվանից, բաժնի պետ է եղել: Արգամ Հովսեփյանի լիազորությունները եւս քրեական վարույթով կասեցված են: Գլխավոր դատախազությունը դատարանից պահանջում է՝ Արգամ Հովսեփյանից եւ նրա հարազատներից, հօգուտ Հայաստանի Հանրապետության, բռնագանձել 5 բնակարան, մոտ 163 մլն դրամ, «որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել», եւ մոտ 135 մլն դրամ էլ՝ «որպես ապօրինի եկամտի մնացորդ»: Մեկ ավտոմեքենան էլ չեն մոռացել:

Արգամ Հովսեփյանը «նախկինի» համբավ ունի, ամուսնացած է Շմայսի՝ ԱԺ նախկին պատգամավոր Առաքել Մովսիսյանի բարեկամուհու հետ, ուստի կարծիք կա, որ նրա դեմ կոռուպցիոն քննությունը պատահական չէ: Վերջին անգամ նա բյուրոյի տնօրենի պաշտոնում վերընտրվել է 2024 թվականին, բայց մինչ այդ էլ պարբերաբար խոսում էին նրա մոտալուտ պաշտոնանկության մասին: 2023-ի օգոստոսին դատախազությունը փորձաքննությունների բյուրոյի նկատմամբ հետաքրքրություն էր ցուցաբերել աշխատակիցներից մեկի բողոքի հիման վրա: Այդ «մարտում» Արգամ Հովսեփյանը հաղթել էր: Ասում են, որ գլխավոր դատախազը գոհ չէ բյուրոյի փորձաքննություններից, դրանց հիման վրա չեն կարողանում դատապարտել նրանց, որոնց պետք է դատել, եւ Հովսեփյանին վաղուց էին, ինչպես ասում են, գրչի ծայրի վրա պահում: Բյուրոյում պատմում են, որ տնօրենի այսքան հարատեւության միակ պատճառն այն է, որ Աննա Վարդապետյանը նրան փոխարինող թեկնածու չուներ ու ստիպված էր հաշտվել նրա գոյության հետ: Այդ ընթացքում խոշորացույցի տակ ուսումնասիրել են Հովսեփյանի եւ նրա հարազատների ունեցվածքը եւ նրանց պատկանող բնակարանների բռնագանձման վարույթ են նախաձեռնել, որի հիմքով էլ պաշտոնավարումը կասեցրել են:

Փորձաքննությունների բյուրոյի որոշ աշխատողներ այս օրերին հիշում են բումերանգի օրենքը, եւ որ ինքն էլ՝ Արգամ Հովսեփյանը, պաշտոնը ստանալուց հետո մոռացավ իր նախկին շեֆին՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հիմնադիր եւ առաջին ղեկավար Արտաշես Զավադյանին, որը նաեւ միջազգային ասպարեզում լայն կապեր ուներ: Տնօրեն դառնալուց հետո Հովսեփյանը չէր հրավիրում Զավադյանին իր ստեղծած կառույցում կազմակերպվող միջոցառումներին, աշխատանքից հեռացնում էր նրա մարդկանց: «Ինչպես որ նա գեղեցիկ չվարվեց Զավադյանի հետ, այդպես էլ իր հետ գեղեցիկ չվարվեցին, եւ այժմ բումերանգը գնում է նրա կողմը»,- ասաց բյուրոյի նախկին աշխատակիցներից մեկը:

Թալանվածը հատիկ առ հատիկ հետ բերելու վարչապետի խոստումը դատախազությունում բառացի են հասկացել:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽՈՍՏՈՎԱՆԵՑ, ՈՐ ԳԻՏԱԿՑՎԱԾ Է ՁՈՐԱԲԵՐԵԼ ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՀԱՅՈՐԴՈՒ

ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ՝ նախօրեին, Նիկոլ Փաշինյանը մի հրեշավոր խոստովանություն արեց, որի վերաբերյալ նրա թիմակիցները երեկ համառ լռություն էին պահպանում՝ չցանկանալով ո՛չ ԱԺ կիցները երեկ համառ լռություն էին պահպանում՝ չցանկանալով ո՛չ ԱԺ ամբիոնից, ո՛չ էլ որեւէ այլ ֆորմատով պարզաբանումներ տալ՝ արդյոք գիտակցվա՞ծ են մի ամբողջ սերնդի ոչնչացման տարել, 5 հազար հայորդու զոհաբերել, հայրենիք հանձնել եւ հանուն ինչի՞...

Հիշեցնենք՝ Փաշինյանն ասել էր. «Գիտակցված զոհողության մենք գնացել ենք 2020թ. եւ արդյունքում ձեռք ենք բերել պետություն եւ անկախություն: Սրանից առաջ էդ բոլոր զոհողությունների հեղինակը մենք չենք եղել, մեզ տարել են կառափնարան եւ զոհել են իրենց շահերին: Առաջին անգամ մենք զոհողության ենք գնացել մեր պետության համար, մեր շահերի համար, մեր ապագայի համար, մեր ինքնության համար»:

Այսինքն, եթե պատերազմից հետո տարբեր թիրախների էր մեղավոր հռչակում՝ մեկ ընդդիմությանը, մեկ նախկիններին, մեկ ռուսներին, մեկ արցախցիներին, եւ բոլորը մեղավոր էին պատերազմի համար, բացի իրենցից, հիմա ճիշտ հակառակն է ասում՝ բացահայտ խոստովանելով, որ գիտակցված են գնացել 44-օրյա պատերազմին: Եվ հանուն ինչի՞, մի՞թե մենք պետություն ու անկախություն չունեինք մինչ այդ եւ հիմա ավելի շատ պետություն ունենք ու ավելի անկախ ենք: Եվ դա՝ այն ժամանակ, երբ Ադրբեջանը, ասենք, ոչ միայն որոշում է, որ մենք Սահմանադրություն փոխենք, այլեւ, օրինակ, Երասխում մետալուրգիական գործարան չկառուցենք կամ միջազգային ատյաններից մեր բոլոր հայցերը հետ վերցնենք, իսկ Հայաստան ժամանած հյուրերին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր չտանենք:

Հայաստանն անկախ պետություն է 1991 թվականից, եւ որեւէ պատերազմ, առավել եւս՝ պարտությամբ ավարտված, չի կարող պետություն եւ անկախություն պարգեւել նրա քաղաքացիներին: Իրենք՝ երբեմնի պոռոտախոս ՔՊ-ականները, եւս շիվարել էին այդ հայտարարությունից եւ որոշել էին լռության ուխտ հայտարարել այս թեմայով, որովհետեւ չգիտեին ինչ ասել, ինչպես բացատրել: Մեր տեղեկություններով, Փաշինյանի պոռթկումը հենց իր թիմում են բացասաբար ընդունել եւ անգամ քննարկել, որ չարժեր նման հայտարարություն անել: Իշխանականների փոխարեն այս թեմային արձագանքեցին ընդդիմադիրները, որոնք բոյկոտել էին կառավարության հետ հարցուպատասխանը:

«Հայաստան» դաշինքի անդամ **Արմենուհի Կյուրեղյանը**, վկայակոչելով Փաշինյանի վերջին օրերի սպառնալիքները, որ եթե ՔՊ-ն սահմանադրական մեծամասնություն չստանա, պատերազմ կլինի, հարցնում է՝ արդյո՞ք կրկին պայմանավորված պատերազմի մասին է Փաշինյանն ակնարկում, ինչպես հարցուպատասխանի ժամանակ խոստովանեց:

«Ի՞նչ գիտակցված զոհողության մասին է խոսքը»,- հարցնում է Կյուրեղյանն ու ինքն էլ պատասխանում. «Գիտակցված ոչինչ չարեցիք, հրադադար չկնքեցիք, որ զոհերը շա՞տ լինեն, չէ՞ որ Շուշի պետք է հանձնեիք: Այսինքն, գիտակցված հանձնել եք Արցախը եւ ումի՞ց անկախացաք: Դե ֆակտո գոյություն ունեցող Արցախը հանձնել եք Ադրբեջանին եւ դա համարում եք անկախությո՞ւն: Վաղն էլ Հայաստանն եք հանձնելու, որ ավելի՞ անկախանաք»: Կյուրեղյանը ՔՊ-ից իրեն հակադարձողներին առաջարկում է մի վարժություն անել. «Գրեք ծրագիր, որը կիրականացնեիք որեւէ իքս երկիր կործանելու համար, համեմատեք ձեր գրած գործողությունների շարքը ձեր արած քայլերի հետ»: Եվ առաջարկում է՝ միասին փորձել այդ վարժությունն անել. «Ո՞րն է թուրք-ադրբեջանական տանդեմի նպատակը՝ Արցախը զավթել, Հայաստանի սահմանային տարածքները գրավել, միջազգային հարթակներից հեռացնել Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման, փոխհատուցման հարցը, ՀՀ-ն դարձնել թուրքական վիլայեթ: Այս մասին Աստծո ամեն օր հայտարարում է հենց ինքը՝ Ալիեւը: Ի՞նչ խնդիրներ պետք է լուծեին դրան հասնելու համար, առաջինը՝ ճշտել, թե ինչ արժեքային հենասյուներով է ապրում հայ ժողովուրդը, Հայաստանում ձեւավորել իրենց նպատակին հասցնող խնդիրները լուծող իշխանություն, վերացնել ազգային ոգին: ՔՊ-ն, իհարկե, չհայտարարեց իր՝ իշխանության գալու նպատակը, բայց երբ սկսում ես գնահատել նրա գործողությունները, ակնհայտ է դառնում թե՛ նպատակը, թե՛ խնդիրների ցանկը»:

Հիշեցնենք, որ մոտ 4 տարի առաջ Փաշինյանը նմանօրինակ խոստովանությամբ կրկին հանդես էր եկել, բայց չէր խոստովանել, որ հենց գիտակցված են գնացել պատերազմի. 2022 թվականին նույն խորհրդարանի ամբիոնից նա հայտարարել էր. «Այսօր ասում են՝ կարո՞ղ էիք կանխել պատերազմը: Կարող էինք կանխել պատերազմը, որի արդյունքում կունենայինք նույն այս վիճակը, իհարկե, առանց զոհերի»:

44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների ծնողների «Որդիների կանչ» ՀԿ-ի անդամները երեկ բողոքի ակցիա էին կազմակերպել ՀՀ գլխավոր դատախազության դիմաց: Նրանք ցանկանում են հանցագործության մասին հաղորդում ներկայացնել դատախազություն՝ Փաշինյանի հայտարարության հիմքով, որով նա խոստովանել է, որ իրենց երեխաներին գիտակցված է տարել զոհաբերության:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

*«Հրապարակի» զրուցակիցը ՍԴ նախկին դատավոր **Կիմ Բալայանն** է:*

- Պարոն Բալայան, ներքաղաքական պրոցեսներին հետեւում եք: Երկիրը մտել է նախընտրական փուլ, իշխանությունը մարզեր է այցելում, շրջում Երեւանում, խոստումներ տալիս, հաճախ կոնֆլիկտի մեջ մտնում քաղաքացիների հետ, քանի որ անգամ տարրական հանդիմանություն չեն հանդուրժում....

- Պարոն Բալայան, ներքաղաքական պրոցեսներին հետեւում եք: Երկիրը մտել է նախընտրական փուլ, իշխանությունը մարզեր է այցելում, շրջում Երեւանում, խոստումներ տալիս, հաճախ կոնֆլիկտի մեջ մտնում քաղաքացիների հետ, քանի որ անգամ տարրական հանդիմանություն չեն հանդուրժում....

- Դե, եթե սրան պետք է հավատան, այդ դեպքում թող վախենան, բայց նորմալ մարդը չի կարող սրա խոսքերից վախենալ, ցանկացած սթափ մարդ հասկանում է, որ Նիկոլին միայն իր անձնական շահն է հետաքրքրում, ուրիշ ոչ մի բան: Ի՞նչ ազգային շահի մասին կարող ենք խոսել, երբ պետությունը կառավարում է ապազգային տարրը: Մեր երկրում թուրքական հրահանգների կատարումը շատ բարձր մակարդակի վրա է, ողջ իրականությունը սա է:

- ՔՊ-ական Վլադիմիր Վարդանյանը դառնում է Սահմանադրական դատարանի դատավոր: Որպես ՍԴ նախկին դատավոր, որը եւս եղել է կուսակցական, ի՞նչ եք կարծում՝ նա անկախ կլինի: Ի դեպ, Փաշինյանը երբ պայքարում էր, որ ՍԴ նախկին նախագահ Հրայր Թովմասյանին հեռացնի, հայտարարում էր, թե նա ՀՀԿ-ական է:

- Ես զարմանում եմ, որ Նիկոլից ազնիվ բան եք ակնկալում: Այդ մարդուն հավատալ չի կարելի: Դուք հավատո՞ւմ էիք նրա ազնվությանը, երբ նա Հրայրի դեմ պայքարում էր: Կա Սահմանադրությամբ սահմանված կարգ: ՍԴ անդամը չի կարող լինել կուսակցական: Ես նախքան դատավոր դառնալն եմ եղել դաշնակցական, անդամակցությունս դադարեցրել եմ՝ դատարան գնալուց առաջ: Ամբիոնից էլ հայտարարել եմ, որ իմ մտածելակերպը չի փոխվելու երբեք, սակայն ես կուսակցության անդամ չեմ կարող լինել: Կուսակցական գործունեություն դրանից հետո չեմ իրականացրել, սակայն այսօր լրիվ այլ բան ենք տեսնում: Որտեղ ինչքան կուսակցական կա, տանում են՝ տարբեր պաշտոնների են նշանակում, հատկապես այնպիսի պաշտոններ են դրանք, պետք են իրեն՝ իշխանությունը պահելու համար:

- Իսկ ընդդիմադիր ուժերի մասին ի՞նչ կարծիք ունեք: Սամվել Կարապետյան, Ռոբերտ Քոչարյան, Ծառուկյան, Թաթոյան, բավականին ակտիվ են:

- Ընդդիմադիր ուժերին պետք է գնահատել իրենց կատարած աշխատանքի չափով: Ռոբերտ Քոչարյանի դեմ վերջին 18 տարվա մեջ այնքան հակաքարոզչություն է տարվել, որ այսօր ժողովրդի մի հստակ մասն ապակողմնորոշվել է եւ չի ցանկանում նրան ձայն տալ, բայց դա մի մասին է վերաբերում: Նրանք, ովքեր գնահատում են մարդու ռեալ աշխատանքը, պատրաստ են վերջինիս ձայն տալ: Ինչ վերաբերում է Սամվել Կարապետյանին, ապա նրա նման հայն արժանի է երկիր ղեկավարելու, ինչո՞ւ, որովհետեւ առանց Հայաստանի հանդեպ որեւէ պարտավորություն ունենալու, նա ամեն ինչ արել է Հայաստանի զարգացման համար: Այսօր այդ մարդն ունի իրավունք՝ երկիր ղեկավարելու:

ՈՐԵՎԷ ԿԱՍԿԱԾ ԿԱ՞, ՈՐ ԳՈՐԾ ՈՒՆԵՆՔ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԽԱԲԵԲԱՅԻ, ՍՏԱԽՈՍԻ ՀԵՏ

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

- Որեւիցե կասկած կա՞, որ գործ ունենք մեծագույն խաբեբայի, ստախոսի հետ, ով 8 տարի շարունակ բացառապես սուտ է խոսել: Նա ապացուցել է, որ բացի սուտ խոսելուց ինքը ոչինչ անելու ունակ չէ: Նրա 8 տարվա գործունեությունն ամեն ինչի մասին խոսում է, տալիս է բոլոր հարցերի պատասխանները: Ես զարմանում եմ, որ դեռ նրա ով լինելու մասով կասկածներ կան: Այդ մարդը խաբեբա է: Ես կարծում եմ, որ հայ ժողովուրդը նույնպես հասկացել է, թե ինչ տեսակ խաբեբայի հետ գործ ունի.... վերջ:

- Բայց նա 8 տարի որեւէ լավ բան չանելուց հետո, հանկարծ որոշեց, որ ընտրությունից 2 ամիս առաջ թոշակները բարձրացնի, որոշ բժշկական ծառայություններ դարձնի անվճար: Չկա՞մ մտավախություն, որ այս պարզ նախընտրական կաշառքը կարող է ոմանց վրա ազդել:

- Նա այնքան խարդախ է, որ անգամ թոշակը չկարողացավ օրինական ճանապարհով բարձրացնել, դա էլ ապօրինի ճանապարհով արեց: Թոշակները բարձրացվում են բյուջեով, այլ ոչ թե վարչապետի հրամանով կամ հանձնարարությամբ: Նորմալ երկրներում, համենայնդեպս, այդպես է: Մոտ միլիարդների պարգեւավճարներ է ստանում իշխանությունը, ու թոշակառուների մի փոքր զանգվածի 10 հազար դրամով փորձում է խաբել, լռեցնել: Մոռացե՞լ եք, որ նախկինում քննադատում էր կոռուպցիան, հիմա ո՞նց է ստացվում, որ ինքն էդքան գումար է մսխում պետությունից: Չկա՞մ կոռուպցիա, չկա՞մ օրենքի խախտում: Եթե ինքն է անում՝ խախտում չէ, եթե ինքը չէ՝ խախտում է: Մենք այնպիսի ժամանակներում ենք ապրում, որ այլեւս ժողովրդին չենք զարմացնի նման քայլերով: Մարդկանց համար ամեն ինչ էլ պարզ է: Հայ ժողովուրդը, իմ խորին համոզմամբ, շատ էլ սթափ է եւ ճիշտ ընտրություն է կատարելու:

- Փաշինյանը ժողովրդին սպառնում է նաեւ պատերազմով, անգամ ամիսն է նշում՝ եթե ես բացարձակ մեծամասնություն չունենամ, սեպտեմբերին Ադրբեջանը կհարձակվի Հայաստանի վրա:

- Բայց ո՞վ է հավատում իրեն: Պարզ չէ՞, որ հասարակ շանտաժ է անում:

- Դե, գուցե լինեն մարդիկ, ովքեր վախենում են այդ սպառնալիքից:

- Դե, եթե սրան պետք է հավատան, այդ դեպքում թող վախենան, բայց նորմալ մարդը չի կարող սրա խոսքերից վախենալ, ցանկացած սթափ մարդ հասկանում է, որ Նիկոլին միայն իր անձնական շահն է հետաքրքրում, ուրիշ ոչ մի բան: Ի՞նչ ազգային շահի մասին կարող ենք խոսել, երբ պետությունը կառավարում է ապազգային տարրը: Մեր երկրում թուրքական հրահանգների կատարումը շատ բարձր մակարդակի վրա է, ողջ իրականությունը սա է:

Ինչ վերաբերում է սահմանադրական արգելքին, որ նա չի կարող ղեկավարել երկիրը եւ այլն, ապա կարող են համապատասխան հոդվածը փոխել, ու վերջ՝ նա կարող է վարչապետ դառնալ: Ես այդ թեզին միշտ դեմ եմ եղել, դեռ շատ տարիներ առաջ, որովհետեւ մենք ունենք մեծ սփյուռք եւ չենք կարող սահմանափակել, թե ում ենք ընտրում վարչապետ, երկրի ղեկավար: Ցանկացած հայ էլ պետք է հնարավորություն ունենա, թող ժողովուրդը կատարի իր քվեարկությունը, բայց օրենքը չպետք է խանգարի.... դա ամենաճիշտ մոտեցումը կլինի: Ժամանակն է, որ այդ օրենքի հոդվածը փոխվի:

ԵԹԵ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԱՊԱՇԽԱՐԻ, ՎԵՐԵՎԻՑ ՀՐԵՇՏԱԿ Է ԻՋՆԵԼՈՒ՝ ՍՐԱՆՑ ՀԱՎԱՔԻ ՏԱՆԻ



Հայկա ԱԼՈՅԱՆ

«Հրապարակի» զրուցակիցն է ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առաջին հրամանատար **Արկադի Կարապետյանը (Ագոն)**:

- Նիկոլ Փաշինյանն ուղիղ տեքստով սպառնում է հայերին՝ ասելով, որ եթե իրենք չընտրվեն, ավելի ճիշտ՝ եթե սահմանադրական մեծամասնություն, այսինքն՝ մոտ 70 մանդատ չունենան խորհրդարանում, աղետալի պատերազմ կլինի:

- Անկախ նրանից, թե որ ուժն է լինելու, պատերազմ լինելու է:

- Ինչո՞ւ:

- Դա իրենցից կախված չէ, աշխարհը պատերազմի մեջ է, երկու սցենար կա՝ Իրանի պատերազմի հետ կապված: Մի սցենարով կարող է մի քիչ դադար ունենանք, եթե այսպես շարունակվի պատերազմը, ի վերջո, դա մեզ էլ է կպնելու, եթե ոչ՝ դադարից հետո, միեւնույն է, լինելու է՝ ով ուզում է լինի, տարբերություն չկա:

- Իսկ ո՞վ է սկսելու, ըստ Ձեզ, այդ պատերազմը:

- Աշխարհը գնում է պատերազմի, երրորդ համաշխարհայինը վաղուց է սկսվել: Ես ասել եմ, որ երրորդ համաշխարհային պատերազմն ամենաուշը սկսվել է 2001 թվականի սեպտեմբերի 11-ին: Տարբեր ձեւերով ընթանում է, հիմա շարունակվում է, եւ վերջը, Աստված մի արասցե, կարող են միջուկային զենք էլ օգտագործել: Բայց այդ մասով բան չեմ կարող ասել, միայն Աստված գիտի: Բայց որ պատերազմ է լինելու, միանշանակ է, թող այս ազգը որոշի՝ ուզո՞ւմ է պատերազմել, թե՞ ոչ:

- Ոչ ոք չի ուզում պատերազմ, բայց Փաշինյանը շեշտում է կոնկրետ ամիս, ասում է՝ սեպտեմբերին է լինելու: Ասում է՝ եթե չընտրեք մեզ, սեպտեմբերին պատերազմ կլինի:

- Չերչիլն ասում է՝ հինգ րոպե միջին ընտրողի հետ խոսեք ու դուք ամեն ինչ կհասկանաք: Ժողովուրդը մինչեւ չապաշխարի, դարձի չգա, ոչ մի լավ բան էլ չի լինելու, ով ուզում է լինի: Այս ժողովուրդը եթե նորից Աստծուն դառնա, ապաշխարի, Աստծո խոսքով ապրի, ամեն ինչ լավ կլինի, եթե չէ՝ լավ չի լինի:

- Բայց այս իշխանությունն ասում է նաեւ՝ զենք ենք առել ու առնում ենք, բարեփոխում ենք բանակը, բունկերներն են նկարահանում ու ցուցադրում, պատերազմին պատրաստ չեն:

- Այդ բունկերը, զենքը մարդ պիտի օգտագործի, չէ՞: Եթե ապաշխարած չլինի, չի կարող նորմալ օգտագործել, թշնամին ավելի հզոր կլինի: Կապաշխարի՝ Աստված մեր կողքին կլինի, կհաղթենք, չէ՝ չէ:

- Իսկ իշխանությունը՝ նա չպե՞տք է ապաշխարի:

- Եթե իշխանությունն այդ գործին սատար կանգնի, ժողովուրդն ավելի հեշտ ու շուտ կգա: Ժողովուրդը կարող է առանց իշխանության ապաշխարել, բայց իշխանությունները որ դրան միանան, ավելի շատ արագ գործը գլուխ կգա: Հոգեւոր աշխատանք ամեն մարդ չի կարող իր վրա կատարել, որ ապաշխարի: Աստված քննում է մեր սրտերն ու երիկամները, ինչպես ինքն է ասել, եւ ինքը տեսնում է՝ դու թատրո՞ն ես խաղում, թե՞ իրականում զղջում եւ ապաշխարում ես:

- Իսկ եթե իշխանությունը չապաշխարի՞:

- Եթե ժողովուրդն ապաշխարի, իշխանությունը տեղում կփոխվի: 88 թվից մինչեւ այսօր մեր պատմության մեջ ամեն ինչ տված է, որ մենք հասկանանք, թե ինչ պետք է անեինք: Հիմա դրա հիմքն էլ հոգեւորն է, հոգեւորն էլ առանց ապաշխարության չի լինում: Մեր ժողովուրդն Աստծուց հեռացել է, դրա համար էլ այս օրին ենք: Քանակային որ մտածում ենք, զենքի չափերը, բնակչության քանակը երբ համեմատում ենք մեր հակառակորդների հետ, մի քանի անգամ գերազանցում ենք: Բայց 90-ականներին հաղթել ենք, որովհետեւ ճիշտ ենք եղել ու դրա մեջ համոզված ենք եղել: Կարեւոր է՝ համոզված ենք եղել, որովհետեւ աստվածային արդարություն ենք ուզել ու հաղթել ենք: Հիմա մենք այնքան ենք հեռացել այդ հասկացություններից, որ պարտվել ենք, ու մինչեւ դա մեր մեջ հետ չգա, մենք չենք հաղթի: Բայց ես գիտեմ, որ հաղթելու ենք, որովհետեւ գալու ենք դրան: Մարդիկ կան, ասում են՝ ամեն ինչ լավ է լինելու. չապաշխարենք՝ լավ չի լինի, կսկսենք կոտորվել, այդ նեղ պահին էլ մեր հայացքները կշրջենք դեպի Աստված, կապաշխարենք, ու դրանից հետո շատ լավ կլինի:

- Առաջին քայլն այս իշխանություններին մերժելո՞վ չպետք է լինի այդ ապաշխարությունը:

- Ժողովուրդը որ ապաշխարի, դա այնքան հեշտ է լինում:

- Այսինքն, ժողովուրդը եթե ապաշխարի, ի՞նքն է առաջինն ազատվելու իշխանությունից:

- Աստծո գործերն անքննելի են, դա այնպես է կատարվելու՝ թե՛ ժողովրդի միջոցով, թե՛ մեկ ուրիշի, թե՛ վերեւից հրեշտակ է իջնելու՝ հավաքի տանի, երբ ապաշխարենք՝ կերեւա:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Ամերիկացի նշանավոր քաղաքագետ Սեմյուել Հանթինգթոնը համաշխարհային ժողովրդավարացման դինամիկան վերլուծում էր ալիքների համատեքստում՝ առանձնացնելով ժողովրդավարացման երեք հիմնական փուլ. առաջինը՝ XIX դարից մինչեւ երկու համաշխարհային պատերազմների միջեւ ընկած ժամանակաշրջանը, երկրորդը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, եւ երրորդը՝ սկսած 1974 թվականից: Ժողովրդավարացման յուրաքանչյուր ալիք նպաստում էր այն պետությունների թվի ընդլայնմանը, որոնցում հաստատվում էին մրցակցային ընտրությունները, քաղաքական բազմակարծությունը եւ ներկայացուցչական կառավարման մեխանիզմները:

Ըստ Հանթինգթոնի՝ ժողովրդավարացման առաջին ալիքը սկիզբ էր առել 18-րդ դարում՝ ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում տեղի ունեցած հեղափոխություններից հետո, իսկ հետագայում արտահայտվել էր Եվրոպայում եւ Հյուսիսային Ամերիկայում ընտրական իրավունքի, պառլամենտարիզմի եւ սահմանադրական կառավարման աստիճանական ընդլայնմամբ ու ամրապնդմամբ: Սակայն այս գործընթացին շուտով հաջորդեց ավտորիտարացման առաջին ալիքը. 1920-ականներից սկսած՝ բազմաթիվ երիտասարդ ժողովրդավարություններ փլուզվեցին ֆաշիստական, ռազմական եւ այլ ավտորիտար ռեժիմների ճնշման ներքո: Այսպիսով, ժողովրդավարական առաջընթացը փոխարինվեց հետընթացով՝ ի ցույց դնելով, որ ժողովրդավարության ինստիտուցիոնալ ձեւավորումը դեռեւս ինքնին բավարար չէ՝ դրա կայունությունն ապահովելու համար:

Ժողովրդավարացման երկրորդ ալիքը սկսվեց 1945-ից հետո եւ պայմանավորված էր ֆաշիզմի պարտությամբ, հետպատերազմյան վերակառուցմամբ, ինչպես նաեւ՝ Արեւմտյան Եվրոպայում, Ճապոնիայում եւ հետգաղութային որոշ երկրներում ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմամբ եւ տարածմամբ: Սակայն 1970-ականներին այս գործընթացը բախվեց ավտորիտարացման երկրորդ ալիքին. Ասիայի, Աֆրիկայի եւ Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներ հայտնվեցին ռազմական ռեժիմների, միակուսակցական համակարգերի եւ անձնակենտրոն ավտոկրատիաների վերահսկողության տակ:

Հանթինգթոնի գնահատմամբ՝ ժողովրդավարացման երրորդ ալիքը մեկնարկեց 1974 թվականին՝ Պորտուգալիայում տեղի ունեցած «մեխակների հեղափոխությունից» հետո, եւ ընդգրկեց Հարավային Եվրոպան, Լատինական Ամերիկան, այնուհետեւ՝ Արեւելյան Եվրոպան եւ հետխորհրդային տարածքի մի մասը: Հենց այս ալիքն էր, որ 20-րդ դարի վերջում սահմանեց գլոբալ լավատեսությունը. ժողովրդավարությունը, ենթադրվում էր, անխուսափելիորեն կդառնա քաղաքական զարգացման համընդհանուր մոդելը: Այս էյֆորիայի մեջ էր, որ լայն ճանաչում ստացավ Ֆրենսիս Ֆուկույամայի «պատմության ավարտի» հայեցակարգը, որի համաձայն՝ լիբերալ ժողովրդավարությունը եւ ազատ շուկայական տնտեսությունը դիտվում էին որպես մարդկության համար քաղաքական եւ սոցիալական կարգի վերջնական ձեւ:

Սակայն շուտով ակնհայտ դարձավ նման սպասումների անհիմն լավատեսությունը: Ավելին, հեղինակավոր շվեդական V-Dem ինստիտուտի օրերս հրապարակած Democracy Report 2026 զեկույցի գնահատմամբ՝ աշխարհում ժողովրդավարության միջին մակարդակը հետ է գլորվել մինչեւ 1978-ի ցուցանիշը, իսկ ժողովրդավարացման երրորդ ալիքի ձեռքբերումները գրեթե զրոյացվել են: Freedom House-ի զեկույցի համաձայն՝ ներկայում ԱՄՆ-ում ժողովրդավարության մակարդակը համադրելի է Հարավային Աֆրիկայի Հանրապետության ցուցանիշին: Ստեղծված իրողությունը հետազոտողները բնութագրեցին որպես ավտորիտարացման երրորդ ալիք, որի ընթացքում աշխարհում արձանագրվում է ժողովրդավարական ռեժիմների աստիճանական նահանջ եւ ժողովրդավարական ինստիտուտների թուլացում:

V-Dem ինստիտուտի 2026-ի զեկույցում Հայաստանը հայտնվել է «զանգակաձեւ ավտոկրատացման» (Bell-turn autocratization) առաջին 10-յակում: Այս հասկացությամբ նկարագրվում է այնպիսի գործընթաց, որի դեպքում ժողովրդավարացումը կարճ ժամանակահատվածում արձանագրում է արագ առաջընթաց, սակայն նույնքան արագ էլ վերածվում է հետընթացի՝ ուղղվելով դեպի ավտոկրատացում: Զեկույցի հեղինակները նշում են, որ Հայաստանում ժողովրդավարացումը հասել էր իր գագաթնակետին 2018-ին՝ ընտրական ժողովրդավարության անցման հետ, սակայն արդեն 2020-ից երկրում հաստատվել է ավտոկրատացման միտումը:

Փորձագետները մասնավորապես նշում են, որ «Փաշինյանի կառավարությունն անցել է կառավարման անձնակենտրոն ոճի՝ սահմանափակումներ մտցնելով կարծիքի արտահայտման ազատության, քաղաքացիական տարածքի եւ քաղաքացիական ազատությունների նկատմամբ»: Նշվում է նաեւ, որ «ատելության հրահրումը, ապատեղեկատվությունն ու բեւեռացումը, ինչպես նաեւ ռազմական իրավիճակն ու Ադրբեջանի հաղթանակը մինչեւ 2023 թվականը այն գործոններն են, որոնք նպաստել են Հայաստանում ժողովրդավարության վիճակի վատթարացմանը»:

Շվեդ գիտնականների զեկույցն ի ցույց է դնում ընտրական ժողովրդավարության վտանգավոր արատը: Թեեւ նման ռեժիմներում կառավարման մանդատը ձեռք է բերվում ընտրության արդյունքում, հետագայում խափանվում են այն մեխանիզմները, որոնք կոչված են ապահովելու ժողովրդավարության բնականոն գործառույթը: Մասնավորապես՝ սահմանափակվում են քաղաքացիական ազատությունները, թուլանում են գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողության լծակները, եւ խախտվում է ինստիտուցիոնալ հավասարակշռությունը: V-Dem 2026-ի զեկույցը վկայում է, թե ինչպես են ժողովրդավարության ընտրական բաղադրիչի առկայության պայմաններում ձեւախեղվում ժողովրդավարական կառավարման ճարտարապետության մյուս կարեւորագույն տարրերը: Մինչդեռ, երբ խաթարվում են կառավարման, հաշվետվողականության, հակակշիռների եւ զսպումների մեխանիզմները, կառավարությունը ստիպված ապավինում է օտարերկրյա ֆինանսական, փորձագիտական եւ քաղաքական աջակցության՝ հաճախ ազգային շահի հաշվին:

Արմեն Մարտիրոսյան
ՀՀ ԳԽ պատգամավոր (1990-95թթ.)
ՀՀ ԱԺ պատգամավոր (1995-99թթ.)
ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան

ԱԱԾ ՏՆՕՐԵՆԸ ՔՊ-ԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐՆ Է ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ

Մարտի 20-ին ԱԱԾ տնօրեն Անդրանիկ Սիմոնյանը, ի պատասխան լրագրողի հարցին, հայտարարել էր, որ Ամենայն հայոց Գարեգին 2-րդ կաթողիկոսի (ի դեպ, նա կաթողիկոսի մասին խոսելիս օգտագործում է Նիկոլ Փաշինյանի օգտագործած տերմինը՝ Կտրիճ Ներսիսյան) եղբայրը՝ ՀԱԵ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսյանը (վերջինիս էլ անվանում է ըստ քաղաքացիական անվան՝ Մկրտիչ Ներսիսյան), հանդիսացել է ԽՍՀՄ ՊԱԿ (КГБ) գործակալ, եւ այդ փաստը ԱԱԾ-ն հանրայնացրել է:

Հիշեցնենք, որ, համաձայն ԱԱԾ տվյալների, Եզրաս արքեպիսկոպոսը 1986-1988 թթ. համագործակցել է ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի հետ: ԱԱԾ-ն նաեւ հայտնել էր, որ Եզրաս արքեպիսկոպոսը ներկայում էլ է կապեր պահպանում օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների ներկայացուցիչների հետ, ինչը կարող է սպառնալիք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության անվտանգությանը եւ շահերին: Ի գիտություն ընդունելով Անդրանիկ Սիմոնյանի հայտարարությունը եւ ԱԱԾ սույն «բացահայտումը»՝ այս թեմայի առնչությամբ մի քանի դիտարկում անենք. եթե Հայաստանի ԱԱԾ-ն նման բացահայտում է անում, ապա ավելի ազնիվ չէ՞ր լինի, որ բացահայտումն արվեր ամբողջական կերպով՝ նաեւ ժամանակի եւ միջավայրի կոնտեքստը հաշվի առնելով: Ինչի մասին է խոսքը:

Եթե իսկապես Եզրաս արքեպիսկոպոսը կամ նույն ինքը՝ Մկրտիչ Ներսիսյանը, համագործակցել է խորհրդային ԿԳԲ-ի հետ, ապա պետք է նախ հաշվի առնել ժամանակաշրջանը՝ 1986-88 թվականներ: Այսինքն՝ այդ ժամանակ չկար Հայաստան անկախ պետություն, Հայաստանը մաս էր կազմում Խորհրդային Միությանը՝ որպես Հայկական ԽՍՀ, եւ, ըստ էության, Մկրտիչ Ներսիսյանը համագործակցել է իր հայրենիքը համարվող երկրի հատուկ ծառայությունների հետ, ինչպես ժամանակին այժմյան ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, իր հայտարարության համաձայն, համագործակցել է իր հայրենիք Հայաստանի Հանրապետության ԱԱԾ-ի հետ: Նման իրավիճակում խնդիրը ոչն է: Հիշեցնենք, որ Հայաստանն անկախացել է 1991 թվականին, իսկ պատմությունից հայտնի է, որ մինչեւ Կրեմլից խորհրդային կարմիր դրոշի իջեցումը ԽՍՀՄ ԿԳԲ-ն գործել է իր բնականոն հունով՝ ըստ իր առջեւ դրված խնդիրների եւ առաջադրանքների, եւ հետո է արդեն վերածեւավորվել ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության եւ այլն:

Մյուս կողմից, ավելի արդար ու ազնիվ չէ՞ր լինի, եթե ՀՀ ԱԱԾ-ն եւ անձամբ Անդրանիկ Սիմոնյանը՝ որպես այդ կառույցի ղեկավար, նման բացահայտում անելիս նաեւ գոնե մի երկու տողանոց պարզաբանում տար այն մասին, թե ինչպիսի տոտալ ու կոշտ վերահսկողության տակ է գտնվել Հայ առաքելական եկեղեցին Խորհրդային Միությունում, ինչպես բոլոր կրոնական կազմակերպությունները: Ընդ որում, այդ վերահսկողությունն իրականացվել է հատկապես հատուկ ծառայությունների միջոցով եւ ոչ միայն կապված է եղել ընդհանուր սովետական աթեիստական պետական գաղափարական եւ քարոզչական հիմքի հետ, այլ նաեւ այն բանի, որ Հայ առաքելական եկեղեցու, այսպես ասած, կենտրոնակայանը գտնվելով Խորհրդային Հայաստանում, եղել է հազարավոր սփյուռքահայերի այցելությունների վայրը, ու եղել են ակտիվ շփումներ Հայ առաքելական եկեղեցու ու հայկական սփյուռքի հետ: Ու դա հավելյալ հարց է եղել, որպեսզի խորհրդային ԿԳԲ-ն ավելի ուշադրությամբ հետեւի առաքելական եկեղեցու «նիստուկացին» հենց ներսից: Ի վերջո, Խորհրդային Միությունն իր ԿԳԲ-ի միջոցով մինչեւ վերջ պայքարել է հայկական միջավայրում իր հիմնական քաղաքական հակառակորդը հանդիսացող «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության դեմ հայկական սփյուռքում:

Ասվածը կարող է հաստատվել խորհրդային ԿԳԲ-ի փաստաթղթերի՝ անցյալ դարի 90-ականներին արված ամենամեծ «սլիվներից» մեկով՝ «Միտրոխինի արխիվում» պահպանված փաստաթղթերով, որտեղ բավականին շատ նյութեր կան թե՛ Առաքելական եկեղեցու եւ թե՛ հայկական սփյուռքի կառույցների դեմ խորհրդային ԿԳԲ-ի կատարած բացասական գործողությունների մասին: Եվ, ի վերջո, եթե հետաքրքիր է տողերիս հեղինակի կարծիքը, ապա ճիշտը լիարժեք ու ամբողջական լյուստրացիան է՝ հնարավոր տհաճ իրավիճակներից խուսափելու եւ մեկընդմիշտ մեր պատմության կարեւորագույն մի շրջանի հետ անկեղծ ու համաչափ առերեսված լինելու համար:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՐԵՎԷ ԿԱԽՈՒՄՆ ԱԴՐԲԵՋԱՆԻՑ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է, ԵՎ ԴԱ ՊԵՏՔ Է ԱՍՎԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ

ՀԱՆՐԱԳԻՐ

Դեմոկրատիայի մասին լսել են ամենքը՝ այն դրական երեւույթ է, թէ բացասական, դժվար է ասել, բայց հանրային կյանքում տոտալիտար հասարակարգերի համեմատությամբ գերադասելի է: Դեմոկրատիայի բացասական դրսեւորումներն էլ գալիս են ոչ այնքան այդ իշխանակարգի էությունից, որքան՝ նենգափոխումից: Հայաստանն այդ առումով աշխարհին ուղղակի masterclass-ներ է տալիս՝ Փաշինյանի՝ մարդու իրավունքների մասին հանկերգելով հոգեւորականների անկողիններ մտնելուց մինչեւ Արցախը պաշտպանելու լոզունգներով իշխանության գալուց հինգ տարի անց ՀՀ գիտաշխատողին Արցախի իրավունքներից խոսելու համար պատժելը: Սակայն Փաշինյանի ծայրահեղ դեպքը մի կողմ թողնելով էլ, աշխարհում քիչ չեն օրինակները, երբ իշխանության եկած ուժն իր խոստումներին, հռչակած նպատակներին, ստանձնած պարտավորություններին համապատասխան չի գործում: Սպասել, նոր ընտրությամբ նման ուժին պատժելը, իշխանությունից հեռացնելը՝ տարիներ կորցնելով, գործնական ու արդյունավետ մեթոդ չէ: Դրա համար էլ հասարակությունները ոչ միայն ընտրում են իշխանություն, նրան օժտում գործելու հայեցողությամբ, այլեւ, երբ անհրաժեշտ է, կիրառում են իշխանություններին որոշակի քայլեր արգելելու կամ պարտադրելու ուղիղ լծակներ:

Լծակները հանրաքվեի, պլեբեսցիտի, հանրագրի եւ այլ իրավական մեխանիզմներն են, որոնցով ուղիղ եւ անմիջականորեն իրացվում է ժողովրդի իշխանությունը: Հանրաքվեներ, պլեբիսցիտներ կազմակերպում է պետությունը՝ ի դեմս իշխանության: Հանրագրեր նախաձեռնում եւ գործադրում է հասարակությունը՝ ոչ պետական դերակատարների եւ հասարակության ներգրավմամբ:

ԻՆՉ ԵՆ ԱՐԵԼ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

Եվրոպական Միությունում, օրինակ, այս տարի մի հանրագիր են բերել ասպարեզ, որով ԵՄ-ից պահանջվում է խզել գործընկերության համաձայնագիրն Իսրայելի հետ: Հանրագիրը քաղաքացիների նախաձեռնությունն է, որին Եվրոպական հանձնաժողովը պարտավոր է անդրադառնալ, երբ ԵՄ անդամ յոթ երկրներից մեկ միլիոն ստորագրություն հավաքվի այդ հանրագրի ներքո: Ընդամենը մեկ ամսում՝ 13.01.2026-16.02.2026, ԵՄ անդամ բոլոր 27 երկրներից արդեն շուրջ կես միլիոն՝ 457, 950 ստորագրություն էր հավաքվել: Դա՝ այն դեպքում, երբ ԵՄ հանրագրերին ստորագրությամբ միանալու ժամկետը մեկ տարի է: Մարդկանց գործնականությունն ու համերաշխությունն ակնհայտ են: Ինչո՞վ են հանրագրի հեղինակները հիմնավորել Իսրայելի հետ ԵՄ գործընկերության համաձայնագրի գործողությունը կասեցնելու պահանջը: Հիմնավորել են Իսրայելի կողմից համաձայնագրի 2-րդ հոդվածի ոտնահարումով: Հանրագրում մասնավորապես ասված է. «Եվրոպական Միության քաղաքացիները չեն կարող հանդուրժել ԵՄ մասնակցությամբ համաձայնագրի գոյություն, որը նպաստում է մարդկության դեմ հանցագործություններ եւ պատերազմական հանցագործություններ կատարող պետության լեգիտիմությանն ու ֆինանսավորմանը»: Ահա այդպես:

Այժմ՝ եվրոպացիների օրինակը եւ հանրագրային նախաձեռնությունն ինչո՞վ են ուշագրավ Հայաստանում, որտեղ 2-3 ամիս հետո խորհրդարանական ընտրություններ են: Այդ համատեքստում ընդդիմադիր գործիչներն ու ուժերն օրնիբուն թվարկում են, թե իշխանությունն ինչն է սխալ արել, ինչի չանելն է սխալ եղել՝ ամփոփելով, որ իրենք գալիս են՝ սխալներից խուսափելու կամ դրանք ուղղելու: Հասարակության այն հատվածը, որը մասնակցելու է ընտրություններին, հնարավորություն կունենա իր քվեով անուղղակի ներկա իշխանության սխալների ուղղում կատարելու կամ չկատարելու: Սակայն Փաշինյանի՝ 2018-ին իշխանությունը զավթելուց ի վեր ոչ մի անգամ ՀՀ ընտրողների կեսը գոնե չի մասնակցել ընտրությունների, հազիվ՝ 45-47 %-ը: Առաջիկա ընտրություններին հնարավոր է ավելի ցածր մասնակցություն լինի: Մինչդեռ կան արգելքներ, որ հասարակությունը հնարավորինս ամբողջական մասնակցությամբ պետք է դնի իր իշխանության առջեւ, այդ թվում՝ այն անձանց ներգրավմամբ, ովքեր հնարավոր է չմասնակցեն ընտրություններին:

ԻՆՉՈ՞Ւ, ԻՆՉՊԵ՞�truncated ԵՎ ԻՆՉՆ ԱՐԳԵԼԵՆՔ

Հազիվ թե որեւէ մեկը Հայաստանում, հատկապես ընտրությունը բոյկոտողների ճամբարից կարող է հանդուրժել, որ Հայաստանին ցորեն մատակարարվի Բաքվից: Նման հեռանկարը կամ սպառնալիքը որքան՝ սխալներից խուսափելու կամ դրանք ուղղելու: Հասարակության այն հատվածը, որը մասնակցելու է ընտրություններին, հնարավորություն կունենա իր քվեով անուղղակի ներկա իշխանության սխալների ուղղում կատարելու կամ չկատարելու: Սակայն Փաշինյանի՝ 2018-ին իշխանությունը զավթելուց ի վեր ոչ մի անգամ ՀՀ ընտրողների կեսը գոնե չի մասնակցել ընտրությունների, հազիվ՝ 45-47 %-ը: Առաջիկա ընտրություններին հնարավոր է ավելի ցածր մասնակցություն լինի: Մինչդեռ կան արգելքներ, որ հասարակությունը հնարավորինս ամբողջական մասնակցությամբ պետք է դնի իր իշխանության առջեւ, այդ թվում՝ այն անձանց ներգրավմամբ, ովքեր հնարավոր է չմասնակցեն ընտրություններին:

ԻՆՉՈ՞Ւ, ԻՆՉՊԵ՞՛Ս

Կոմս Մոնտե Քրիստո. հորինվա՞ծք, թե՞ իրականություն

Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» վեպը համաշխարհային գրականության գլուխգործոցներից է: Վեպը լույս է տեսել 1844-46 թվականներին, բայց գրավիչ ու արդիական է մինչ օրս ոչ միայն արկածային պատմության, այլ նաեւ արդարության, վրեժի ու ներողամտության մասին փիլիսոփայական մտորումների պատճառով: Այսօր կխոսենք այն մասին, թե արդյոք վեպն ամբողջովին հեղինակի գրական հանճարի արդյունքն է, թե՞ ունի նաեւ պատմական հենք, այսինքն՝ եղե՞լ են իրադարձություններ, որոնք հիմք են ծառայել վեպի համար: Սյուժեն զարգանում է Ֆրանսիայում, 19-րդ դարի սկզբին՝ Նապոլեոնի անկումից մինչեւ Լուի Ֆիլիպի գահակալությունը: Գլխավոր հերոսը Էդմոն Դանտեսն է: Նա զոհ է գնում դավադրությանը, հայտնվում բանտում, երկար տարիներ անց ազատության մեջ է հայտնվում՝ փախչելով բանտից, եւ իր դեմ դավադրություն գործածներից վրեժ լուծում: Այս ամենն առաջին հայացքից գրական ստեղծարարության եւ հորինվածքի արդյունք կարող է լինել: Սակայն պարզվում է, որ վեպը գրելու համար Դյուման իրական աղբյուրների վրա է հիմնվել: Դրանցից գլխավորը «Փարիզյան ոստիկանական արխիվի հուշագրություններ» գործն է եղել՝ հրատարակված 1838 թվականին: Հուշագրությունը կազմել է ֆրանսիացի արխիվագետ Ժակ Պյոշեն: Այդ ժողովածուի մեջ էլ Դյուման գտել է այն պատմությունը, որը հիմք է դարձել «Կոմս Մոնտե Քրիստոյի» ստեղծման համար:

Խոսքը իրականում ապրած Պյեր Պիկոյի մասին է: Նա 1807 թվականին հանիրավի մեղադրվել է իր բարեկամների կողմից լրտեսության մեջ եւ բանտարկվել: Բանտում ծանոթացել է իտալացի մի հոգեւորականի հետ, որը մահվանից առաջ բացահայտել է իր թաքցրած գանձի գաղտնիքը: Ազատվելուց հետո Պիկոն հարստացել է եւ վրեժ լուծել բոլոր նրանցից, ովքեր կործանել են իր կյանքը: Իրականում, Պիկոն վրեժ է լուծել բավականին դաժանորեն, երբեմն էլ՝ քրեական էլեմենտներ կիրառելով: Դյումայի հերոս Դանտեսի վրիժառությունը մի փոքր այլ է: Գրականագետները կարծում են, որ «Կոմս Մոնտե Քրիստոն» ստեղծելիս Դյուման նաեւ ժամանակի այլ կրիմինալ պատմություններից կամ ամփոփագրերից է օգտվել, օրինակ՝ դատախազ Վիլֆորի ընտանիքում թունավորումների դրվագում մասնագետները տեսնում են իրական դեպքերի շարադրանք: Արդյունքում՝ մասնավոր քրեական պատմությունը մեծ գրողի գրչի ներքո դարձել է ունիվերսալ պատմաարկածային վեպ՝ համեմված փիլիսոփայական շեշտադրումներով:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՒՇԱՆՔ

ՀՈՒՍԱՆՔ՝ «ՎԵՐՋԻՆ ԿԱՆԳԱՌԸ» ՆՈՐԻ ՍԿԻԶԲԸ ԿԼԻՆԻ, ՈՉ ԹԵ ՄԵՐ ԱՎԱՐՏԸ

Զրուցակիցս վաստակաշատ լրագրող, գրող, հրապարակախոս **Հովհաննես Կարապետյանն** է: Մեր զրույցն առօրյա թեմաներից բնականորեն տեղափոխվեց ներհայաստանյան խնդիրների դաշտ: Ի՞նչ է սպասվում մեր երկրին առաջիկա ամիսներին, ժողովուրդը պատերազմի՞ կողմնակից է, թե՞ խաղաղության, ո՞վ կարող է լինել խաղաղության իրական երաշխավորը: Եվ արդյոք այդպիսին կարո՞ղ է համարվել այն մարդը, որը երկիրը տարել է պատերազմների ու պարտությունների միջով, բայց շարունակում է պահպանել վարչապետի պաշտոնը եւ հանդես գալ խաղաղություն բերողի դիրքերից:

Մի հարցում համակարծիք էինք՝ «Քաջ Նազարը» գահին կմնա այնքան ժամանակ, քանի դեռ ժողովուրդը չի գիտակցել, որ ինքն է ստեղծել նրան եւ իր գլխին բերել այս պատուհասը: Իսկ ե՞րբ կհասկանա, ո՞վ պիտի բացատրի կատարվածի ողբերգական խորությունը, ո՞վ պիտի կոչ անի զգոնության ու խոհեմության:

- Այդ դերը վերապահված է արվեստի ու մշակույթի ներկայացուցիչներին, հասարակության առաջադեմ շերտին՝ ինտելիգենցիային,- նկատում է զրուցակիցս: - Նրանք պետք է իրենց համոզիչ խոսքով արթնացնեն հանրային ինքնագիտակցությունը, ձեւավորեն անհանդուրժողականություն անարդարության նկատմամբ եւ կանգնեն ճշմարտության որոնման առաջնագծում:

Իսկ այսօր նրանք կատարո՞ւմ են իրենց առաքելությունը: Ոչ լիարժեք: Շատերը «քնած» են, ոմանք էլ կարծում են, թե իրենց գլխավոր «գործը» ոչ թե ստեղծագործելն ու խոսելն է, այլ ժամանակին լռելը՝ «թող ուրիշը խոսի» սկզբունքով: Կարապետյանը հիշեց երկու հայտնի բանաստեղծներին, որոնք տարբեր ժամանակներում իրենց գործերով ցուցադրել են հարմարվողականության դասական պատկեր: Անկախության առաջին տարիներին նրանք գրել էին «Իմ առաջնորդը» եւ «Բորենիների խրախճանքը» բանաստեղծությունները, որոնք պարբերաբար տպագրում էին ընտրություններից հետո՝ արդեն նոր իշխանություններին հարմարեցված իմաստներով: Նոր նախագահը դառնում էր «նոր առաջնորդը», իսկ նախորդը՝ «բորենիների խրախճանքի» խորհրդանիշը:

Այնուհետեւ զրուցակիցս երկար խոսեց. «Այսօր իշխող շրջանակների համար ցանկացած այլախոհ կարող է պիտակավորվել որպես «օտար գործակալ», եւ դրա հետեւանքները կարող են լինել հալածանքները: Ստեղծագործական միությունները թմբիրի մեջ են, քանի դեռ նրանց շահերին վտանգ չի սպառնում: Նույն վիճակում են նաեւ շատ անհատ ստեղծագործողներ, որոնք ժամանակ անց, երբ իրավիճակը հանդարտվի, կհիշեն իրենց «հերոսական լռությունը» եւ կգրեն, թե ինչպես էին պայքարում անարդարության դեմ: Աշխարհն այսօր ապրում է լարված ու անհանգիստ ռիթմով: Ամեն օր արթնանում ենք ծանր լուրերի ճնշման տակ, նոր վտանգների շրջապտույտում: Այդ վտանգները ոչ միայն չեն նվազում, այլեւ ավելանում են: Անսպասելի չէր նաեւ իշխանություն-եկեղեցի հակադրության սրացումը, որն ուղեկցվում է ատելության խոսքի աննախադեպ աճով: Հասարակության մի հատվածը հոգեկան ծանր վիճակում է, մյուսն ապրում է պատրանքների մեջ: Փորձ է արվում մոռացության մատնել անցյալը՝ ցեղասպանությունը, Արցախը, ազգային հիշողությունը: Մինչդեռ հիշողությունն է մարդուն տարբերում կենդանուց: Դրան խորքային կերպով անդրադարձել է Հրանտ Մաթեւոսյանը: Նրա մտքերի հետ իմ մտովի երկխոսությունն ամփոփել եմ «Իսկ ո՞ւր է քո խարիսխը» գրքում: Մաթեւոսյանը հիշեցնում է՝ ժողովուրդը հարգանք է վաստակում ուժով, արժանապատվությամբ եւ ինքնության պահպանմամբ: Իսկ աշխարհաքաղաքական բարդ իրավիճակներում անհնար է խուսափել փոթորիկներից. եթե խորտակվում ես, պատճառը ոչ միայն փոթորիկն է, այլեւ քո անպատրաստ լինելը: Ամեն ժողովուրդ իր խարիսխը պիտի ունենա: Եվ մի կարեւոր հարց է հնչում՝ ո՞ւր է մեր խարիսխը: Դա ճշմարտության որոնումն է: Այսօր, ցավոք, հասարակական կյանքում նկատելի են ֆեոդալական բարքեր, մենք հաճախ խուսափում ենք տեսնել ու բարձրաձայնել չարը: Բացախոսությանը փոխարինել է քծնանքը, որը հիվանդացնում է հոգին: Մինչդեռ հասարակությանն առողջ հոգեւոր միջավայր է անհրաժեշտ: Սակայն, երբ կրթության եւ դաստիարակության պատասխանատուն հայտարարում է, թե հայրենասիրությունը «փուչիկ» է եւ նույնիսկ՝ վտանգավոր, պայթող փուչիկ, ապա խնդիրը դառնում է առավել խորքային: Արժեքների բախման այս փուլում, անվտանգության թուլացման պայմաններում, լավատեսության փոքր նշույլ է հաղորդում մետրոյում արցախցի տիկնոջն ուղղված այն խոսքը, թե «վերջին կանգառում ենք»: Հուսանք՝ այդ կանգառը «չարի վերջը» եւ նորի սկիզբը կլինի, ոչ թե ավարտ»:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՊԻՏԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ԴՊՐՈՑԸ ՓԱԿՎՈՒՄ Է

Մինչ Փաշինյանն եւ իր կառավարությունը հանրությանը փորձում են համոզել, որ Հայաստանում դպրոցները չեն փակվում, դպրոցների տնօրենները եւ ուսուցիչներն ահազանգում են՝ դպրոցները փակվում են, իրենք մնում են անգործ, աշակերտներին գյուղից գյուղ են տանելու, եւ դա հերթական էքսպերիմենտն է լինելու՝ անհայտ ճակատագրով, իսկ 200-ից ավելի գյուղ՝ դպրոց չունենալու պատճառով, դանդաղ մահանալու է:

Հիշեցնենք. ՀՀ կառավարության 2023 թ. սեպտեմբերի 11-ի №1790-Ա/2 որոշման համաձայն, հաստատվել է «ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագիրը», որը նախատեսում է բոլոր մարզերում 200-ից ավելի դպրոցների «օպտիմալացում», որը ոչ այլ ինչ է, քան փակում: Ըստ այդ որոշման, քիչ թվով աշակերտ ունեցող դպրոցները միավորվում են համեմատաբար խոշոր մեկ դպրոցի մեջ: Օրինակ, Սյունիքի մարզում օպտիմալացվում է 48 դպրոց, որոնց թվում՝ սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրերի դպրոցները: Ըստ խոշորացված համայնքների, կօպտիմալացվի Կապանում՝ 12 դպրոց, Սիսիանում՝ 19, Տաթեւում՝ 2, Գորիսում՝ 3, Տեղում՝ 3, Քաջարանում՝ 4, Մեղրիում՝ 5 դպրոց:

Ըստ մասնագետների, սա օպտիմալացման անվան տակ քողարկված կրճատում է, որը հարվածի տակ է դնելու հեռավոր համայնքների կենսունակությունը: Վաղատուր համայնքի բնակիչները մեզ հետ զրույցում ասացին, որ իրենց դպրոցի շենքային պայմանները լավ են, եթե դպրոցը փակվի, գյուղը կդատարկվի, գյուղ պահողը դպրոցն է: Ըստ նախնական տվյալների՝ Խոզնավարի եւ Վաղատուրի միջնակարգ դպրոցները միանալու են Խնածախում կառուցվող կրթահամալիրին:

Մեզ հետ զրույցում Վաղատուրի միջնակարգ դպրոցի տնօրեն **Միհեր Առաքելյանն** ասաց. «Ներկա պահին դպրոցն ունի 44 աշակերտ, աշխատողների թիվը 30-ն է»: Հարցրինք՝ ինչպե՞ս է լուծվելու աշակերտների տեղափոխման հարցը, եւ քանի՞ աշխատակից է գործազուրկ մնում: «Ասում են, որ կառավարության որոշմամբ՝ տրանսպորտ է լինելու, որ երեխաներին տեղափոխի: Աշխատողների հետ կապված դեռ պարզ չէ, չգիտենք: Ասում են՝ որքան հնարավոր է, կտեղավորեն աշխատանքի, բայց դե՝ չեն կարող բոլորին տեղավորել: 3 գյուղում միասին 100 աշխատող կա, ո՞նց կարող են բոլորին տեղավորել աշխատանքի»,- ասաց դպրոցի տնօրենը:

Վաղատուրի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1962 թվականին: 64 տարի շարունակ գործող եւ կայացած դպրոցն այս կառավարության օրոք կփակվի: Զավեշտն այն է, որ 2023 թվականին, կառավարության որոշմամբ, դպրոցի շենքը կապիտալ վերանորոգվել է: Կապիտալ վերանորոգված դպրոցը 3 տարի անց որոշում են փակել: Ի դեպ նշենք, որ Խնածախի կրթահամալիրը կառուցվում է Խոզնավարի, Վաղատուրի եւ Խնածախի միջնակարգ դպրոցների աշակերտների համար: Ընդհանուր թվով, կրթահամալիրում կարող է ուսանել 280 աշակերտ: Պետության ներդրումը կազմում է 1 միլիարդ 700 միլիոն դրամ: Հիշեցնենք, որ Փաշինյանի հաստատած խաղաղության պայմաններում՝ 2025 թվականի մարտ-ապրիլ ամիսներին ադրբեջանական կողմը կրակել էր Խնածախի ուղղությամբ՝ վնասելով բնակելի տուն:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍԱ ՈՉ ԱՅԼ ԻՆՉ Է, ՔԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցն Արցախի Հանրապետության ԱԺ պատգամավոր **Մետաքսե Հակոբյանն** է:*

- Մետրոյում Փաշինյանի եւ Արցախյան ազատամարտի լուսահոգի հերոսի դստեր միջեւ հայտնի միջադեպը մեծ աղմուկ է բարձրացրել: Վարչապետի աթոռին նստածը, հերթական անգամ անհավասարակշիռ վարք դրսեւորելով, պիտակավորեց արցախցիներին եւ չքմեղացավ, թե Արցախն ինքը չի հանձնել, ապա մի քանի անգամ ներողություն խնդրեց ճշմարտախոս արցախցուց: Այս ընտրություններում արցախցիների գործոնն ինչպիսի՞ն կլինի:

- Մետրոյում տեղի ունեցածը հստակ եւ իրական ցուցադրությունն էր ՀՀ իշխանությունների, մասնավորապես՝ նրա ղեկավարի վերաբերմունքի, արցախցիների եւ ոչ միայն նրանց, առհասարակ արժանապատիվ հայի նկատմամբ: Եվ Արմինեի պատասխանը Փաշինյանին՝ արցախցիների եւ արժանապատիվ հայերի միասնական պատասխանն էր: Կարծում եմ, այդ միջադեպը վկայեց, որ այս իշխանությունները գալիք ընտրություններում արցախցիներից որեւէ աջակցություն չեն կարող ունենալ: Միաժամանակ, անկեղծ ասեմ, որ 2020-ի, ապա 2023-ի տեղահանումից հետո շուրջ 160 հազար արցախցուց գուցե 10 հազարն են, որ կարծես չունեն հայրենիքի զգացում: Հետեւաբար, նրանց մի մասը ներգրավված չի լինի որեւէ գործընթացում, մի մասն էլ, գուցե, նյութական շահի դիմաց իր աջակցությունը ցույց կտա այս իշխանություններին: Բայց դա ոչ որակական, ոչ քանակական ազդեցություն չի ունենա եւ չի արտացոլի արցախցիների հավաքական դիրքորոշումն այս ամենի վերաբերյալ: Ի վերջո, արցախցին չի կարող կանգնել իր զավակին սպանդի ուղարկած, իր հայրենիքը հանձնած անձի կողքին:

- Առհասարակ, Արցախից, արցախահայությունից, Բաքվում ապօրինաբար բանտարկված Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունից, ըստ էության, հրաժարված Փաշինյանի համար խաղաղության կարգախոսը դարձել է քարոզարշավի հիմնական կետը: Կրկին սպառնում է վերահաս պատերազմով, եթե չընտրվի: Շանտաժ չէ՞ սա, եւ արդյո՞ք ժողովուրդն այս անգամ էլ տեղի կտա այս մանիպուլյացիային:

- Այն, ինչ արդեն իսկ մոտ 5-6 տարի անում են այս իշխանությունները, ժողովրդին անընդհատ վախի մեջ պահելով, որ եթե իրենք չլինեն, պատերազմ կլինի, բնական է՝ իրենց նախընտրական քարոզարշավի մեխն է: Սա ոչ այլ ինչ է, քան վերջնական դիկտատուրայի հաստատում Հայաստանում, եւ, Աստված մի արասցե, իրենց վերարտադրվելու դեպքում դա աննախադեպ եւ անասելի դրսեւորումներ է ունենալու: Սա բացահայտ ահաբեկչություն է սեփական ժողովրդի նկատմամբ, այն առումով, որ հնարավորություն չկա այլեւս այլակարծության: Նույնիսկ անտարբեր քաղաքացին իր ներսում վախենալու է այլ տարբերակներ ունենալ՝ մտածելով, որ իրենց քարոզչության արդյունքում պատերազմ է լինելու: Մենք շատ լավ հասկանում ենք, որ մեզ պես փոքր ժողովուրդ, փոքր տարածքներ ունեցող պետությունները մշտապես ձգտում են խաղաղության հաստատման, ինչը տեղի է ունեցել երեք տասնամյակ շարունակ: Բայց դա արվում է ոչ թե պատերազմով, այլ՝ դիվանագիտական դաշտում ուժեղ լինելով: Իհարկե, զուգահեռաբար չմոռանալով բանակի ուժեղացման մասին՝ զուտ պաշտպանությունը պատշաճ եւ արժանապատիվ մակարդակի վրա կազմակերպելու համար: Այս իշխանությունները 2018-ից ի վեր իրենց պայմանավորվածությունների արդյունքում արված հայտարարություններով վերջ դրեցին արտաքին դիվանագիտությանը, որը բերում է խաղաղություն: Հենց իրենք կերտեցին պատերազմ, իրենք պատերազմի ճարտարապետներն են: Ուստի, թե՛ պատերազմում, թե՛ արտաքին դիվանագիտության մեջ պարտված իշխանությունները երբեւէ չեն կարող բերել խաղաղություն: Այն, ինչ ասում են սրանք, կեղծ է, սա խաղաղություն չէ, սա սուվերեն տարածքների հանձնման նախապայման է: Իրենք որեւէ կերպ չեն անդրադառնում Հայաստանի օկուպացված տարածքներին: Հետեւաբար, այլ զիջումներ են սպասվում Հայաստանին:

- Դուք անձամբ ինչպիսի՞ն եք տեսնում ընտրությունների ելքը, հույս կա՞, որ այն «ապագան», որը ժամանակին խոստանում էր Փաշինյանը, այլեւս չի կրկնվի:

- Ըստ իս, ամենալավ տարբերակը՝ գնալու հերթական ընտրությունների, պետք է այնպիսին լիներ, որ դրա կազմակերպիչները չլինեին այս իշխանությունները, որովհետեւ արդեն իսկ հաստատված փաստ է՝ այս իշխանությունները որեւէ բանի առաջ չեն կանգնելու: Առաջին. տեղի են ունենում եւ շարունակելու են տեղի ունենալ, ուժգնանալ բռնաճնշումները, թիրախավորումն այն հատվածի, որը քաջություն է ունենալու այլակարծություն հայտնել: Հաջորդը՝ ընտրակաշառքները, որոնք արդեն իսկ սկսել են տրվել. թոշակների, մանկապարտեզների դաստիարակների վարձատրության բարձրացում, արցախցիների բնակարանային խնդիրների լուծման համար իբր 1 միլիոն ՀՀ դրամի շեմի բարձրացում, եւ այսպես շարունակ: Ամենակարեւորը՝ միանշանակ ընտրակեղծիքներ, որոնք արդեն տեղի են ունենում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինչ ազատ, արդար ու թափանցիկ ընտրություններից կարող ենք խոսել, եթե Հայաստանում կա արձանագրված 7 տասնյակ քաղբանտարկյալների առկայություն: Այս ամբողջ ռեսուրսն օգտագործելով՝ այս իշխանությունները փորձելու են վերարտադրվել: Այս իմաստով շատեմ կարեւորում ընդդիմության սթափությունն այն առումով, որ թիրախը միայն մեկն է՝ այս իշխանությունները: Հետեւաբար, այն հատվածները, որոնք կթիրախավորեն մեկմեկու, կփորձեն պայքարել մեկմեկու դեմ, ուրեմն իրենց պայքարը ոչ թե այս իշխանությունների դեմ է, այլ խորհրդարանում որպես ուժ ներկայանալու մեջ է: Պետք է միասնական գիտակցել թիրախը եւ պայքարել հակահայկական իշխանությունների դեմ:

Արա ԱԼՈՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 27.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՊՈՒՏԻՆԻՑ ԹՐԱՄՓԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՎ ԻՆՔՆԻՇԽԱՆ ՉԵՆՔ ԴԱՌՆԱ

Երբ հետեւում ես նախընտրական Հայաստանի քաղաքական դասի արածներին ու ասածներին, հասկանում ես, որ մեր անկախության շրջանի բոլոր ձախողումները քաղաքական դասի ձախողվածությունից են գալիս: Ուրիշ ինչի՞ց կարող էր լինել այն կարծրատիպը, թե իբր Հայաստանի ինքնիշխանությունը ոտնահարվում էր, երբ Հայաստանի վարչապետին Մոսկվայից էին նշանակում, բայց ոչ միայն չի ոտնահարվի, այլեւ ճիշտ հակառակը՝ ինքնիշխանության մակարդակը կբարձրանա, եթե նրան Արեւմուտքից կամ Թուրքիայից ու Ադրբեջանից պաշտպանեն:

Կամ՝ ինչպե՞ս կարելի է բնորոշել Հայաստանի քաղաքական որոշ շրջանակների պնդումներն այն մասին, թե նախընտրական այս փուլում Հայաստան ժամանող եվրոպական մասնագետների խումբը, որը «քաղաքակրթված եւ բարի» Եվրոպայից է գալիս, եկել է ոչ թե Հայաստանի ընտրություններին միջամտելու, այլ՝ Ռուսաստանի կողմից մեր դեմ վարվող հիբրիդային պատերազմում մեզ աջակցելու համար: Այնինչ, ինչպես Հայաստանի վարչապետի դրսից արվող նշանակումը, այնպես էլ Հայաստանի դեմ որեւէ կողմի սանձազերծած հիբրիդային պատերազմի դեմ պայքարում մյուս կողմին ապավինելը ոչ միայն ինքնիշխանության նշաններ չեն, այլեւ հենց ինքնիշխանության վերջնական կորուստ են նշանակում:

Այս իմաստով, Հայաստանի այսօրվա քաղաքական դասի ամենամեծ խնդիրը, թերեւս, այն պարզ ճշմարտությունը չհասկանալն է, որ Հայաստանի ինքնիշխանությունը չի չափվում ոչ նրանով, թե որքան է նա հեռացել Ռուսաստանից, եւ ոչ էլ նրանով, թե որքան է մոտեցել Եվրոպային: Վերջապես բոլորս պետք է հասկանանք, որ Հայաստանի ինքնիշխանության տեսակետից ամենեւին էլ կարեւոր չէ՝ Պուտինը, Սին Ծինփինը, Թրամփը, թե՞ Մակրոնն են նշանակում Հայաստանի վարչապետին, եւ ոչ էլ կարեւոր է՝ Ռուսաստանի՞ աջակցությամբ է Հայաստանը պայքարում Եվրոպայից եկող հիբրիդային պատերազմի դեմ, թե՞ Եվրոպայի աջակցությամբ է պայքարում Ռուսաստանից եկող հիբրիդային պատերազմի դեմ:

Այս առումով, Հայաստանի ինքնիշխանության համար այնքան, ինչքան կարեւոր է, որ ՀՀ վարչապետին ոչ թե Պուտինը, Սին Ծինփինը, Թրամփը կամ մեկը ուրիշը նշանակի, այլ Հայաստանի Հանրապետության քաղաքացին ընտրի, նույնքան էլ կարեւոր է, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես ինքնիշխան պետություն, կարողանա թույլ չտալ, որ իր դեմ վարվող հիբրիդային պատերազմում իրեն աջակցելու պատրվակն օգտագործելով, ինչ-որ մեկը կարողանա միջամտել իր ընտրություններին:

Այս քաղաքական դասը, ի վերջո, պիտի հասկանա, որ երկրի խնդիրը ոչ չափից շատ ռուսամետ եւ ոչ էլ չափից շատ եվրոպամետ, ոչ չափից շատ ժողովրդավարական, ոչ էլ չափից շատ բռնապետական լինելը չէ, այլ խնդիրն արդյունավետ ու մարտահրավերներին համահունչ պետություն ունենալն է:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am